ՀԱՅԿԱԶ ԴԱԲՐԻԵԼԻ ԱՍԼԱՆՅԱՆ

Դաներ ու երկարատև հիվանդությունից հետո, 77 տարեկան հասակում, վախճանվեց փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայկական ՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ, 1931 թ. ՍՄԿԿ անդամ Հայկազ Դաբրիելի Ասլանյանը։

Հայկազ Ասլանյանը Սովետական Հայաստանում փիլիսոփայության բնագավառի հնագույն և հանրաճանաչված մասնագետներից էր։ Նա իր ողջ գիտակցական կյանքը նվիրել է դասախոսական-ուսուցողական, ստեղծագործական ու գիտակազմակերպչական գործին։ Հ. Ասլանյանը մեծ ավանդ է մուծել հայ աշխատավորությանն ու մտավորականությանը փիլիսոփայական դիտելիքներ հաղորդելու, նրանց մարքսիզմ-լենինիզմի ոգով դաստիարակելու, ինչպես նաև փիլիսոփայության ասպարեզում դիտահետազոտական աշխատանքներ ղեկավարելու գործում։

Հայկազ Դաբրիելի Ասլանյանը ծնվել է 1903 թվականին, Երևանի նահանգի Սուրմալուի գավառի Կողբ գյուղում։ Նրա ծնողները Թուրքական արյունոտ յաթաղանից փրկվելու համար բազմահազար հայ ընտանիքների հետ 1915 թ. գաղթում են Երևան։ Կտղ հասակում զրկվելով ծնողներից, նա երկու տարի քրոջ հետ ապրում է Էջմիածնի որբանոցում։

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուն պես Հայկազ Ասլանյանը մտնում է կոմերիտմիության շարքերը և լծվում կոմերիտական-հասարակական աշխատանքի՝ սկզբում Էջմիածնի գավառական կոմիտեում, ապա՝ Ապարանի շրջկոմում որպես պատասխանատու քարտուղար։ Նա 1923 թվականին գործուղվում է Թբիլիսիում բացված 26 Կոմիսարների անվան Անդրկովկասի կոմունիստական համալսարանում սովորելու։ 1926 թվականին, համալսարանն ավարտելուց հետո, Հայկազ Ասլանյանը ընդունվում է նույն համալսարանի փիլիսոփայության ամբիոնին կից ասպիրանտուրան, որը հաջողությամբ վերջացնում է 1929 թվականին։ Ուսանողական և ասպիրանտական տարիներին նա միաժամանակ հասարակագիտություն է դասավանդում Թբիլիսիի 72-րդ հայկական միջնակարգ դպրոցում և հայկական մանկավարժական տեխնիկումում։ Բարձրագույն ուսումնական հաստատություններում Հայկազ Ասլանյանը սկսում է դասավանդել 1928 թվականից՝ սկզբում դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի դասընթաց է կարդում կոմհամալսարանի գիշերային բաժնում, ապա՝ Թբիլիսիի բարձրագույն այլ հաստատություններում։

1931 թ. սեպտեմբերին Հայկազ Ասլանյանը փոխադրվում է Երևան։ Այդ ժամանակից սկսած 22 տարի նա հաջորդաբար ղեկավարել է քաղաքի անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտի, ապա՝ ռուսական մանկավարժական ինստիտուտի, երկար տարիներ՝ պետական համալսարանի, այնուհետև՝ Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմին առընթեր հանրապետական կուսակցական դպրոցի փիլիսոփայության ամբիոնները։ Շնորհիվ մարքսիստական փիլիսոփայության խոր ու բազմակողմանի փաստության, պայծառ հիշողության, նա մեծ սեր ու հարգանք է վայելել ուսանողության և ունկնդիրների շրջանում, ջանք չի խնայել հետաքրքրություն ու սեր արթնացնելու նրանց մեջ փիլիսոփայության նկատմամբ ընդհանրապես և մարքսիզմի նկատմամբ՝ մասնավորապես։

Հայրենական պատերազմի տարիներին, դասախոսական աշխատանքին զուգահեռ, նա բրոշյուրներ ու հոդվածներ է գրում՝ մերկացնելով հիտլերականների բարբարոսական էությունը

նը, բազմաթիվ դասախոսություններ կարդում զորամասերում։ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի որոշմամբ այդ տարիներին նա մի որոշ ժամանակ ղեկավարել է նաև «Կոմունիստ» և «Սովետական Հայաստան» թերթերի պրոպագանդայի բաժինները։

Հայկազ Ասլանյանը մեծ ծառայություններ ունի փիլիսոփայության բնագավառում ստեղծագործական աշխատանքները կազմակերպելու ուղղությամբ։ 1944—1948 թթ. նա գլխավորել է ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության նորաստեղծ սեկտորը, 1956-ից մինչև 1969 թ. կրկին ստանձնել է ԳԱ փիլիսոփայության և իրավունքի սեկտորի ղեկավարությունը, իսկ սեկտորը փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի վերածվելուց հետո, մինչև 1978 թ., եղել է այդ ինստիտուտի պատմական մատերիալիզմի և գիտական կոմունիզմի բաժնի վարիչը։

Հայկազ Ասլանյանը զգալի աշխատանք է կատարել մարքսիզմ-լենինիզմի դասականների աշխատությունները հայերեն թարգմանելու և հրատարակելու գործում։ 1948-ից մինչև 1956 թվականը ղեկավարելով ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի թարգմանությունների սեկտորը, նա ամենաակտիվ մասնակցություն է ունեցել մարքսիզմ-լենինիզմի դասականների բազմաթիվ աշխատությունների հայերեն թարգմանությունները խմբագրելու գործում։

Հ. Ասլանյանը նշանակալից ծառայություններ է մատուցել մեր գիտական մամուլի հրատարակման գործին։ 1958—1961 թթ. նա ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագրի» (հասարակական գիտություններ) խմբագիրն էր, իսկ 1958 թ. մինչև իր մահը՝ նրա (1966 թվականից՝ «Լրաբերի») խմբագրական կոլեգիայի անդամը։

Հայկազ Ասլանյանն ունի 50-ից ավելի գիտական աշխատանքներ։ Նրա գրչին է պատկանում դիալեկտիկական մատերիալիզմի՝ հանրապետությունում առաջին ինքնուրույն դասագիրքը, որը լույս է տեսել դեռևս 1930 թվականին։ Նա գրել է մի շարք բրոշյուրներ և բազմաթիվ հոդվածներ դիալեկտիկական ու պատմական մատերիալիզմի և ռուս փիլիսոփայության պատմության արմատական հարցերի վերաբերյալ, ունի ստվարածավալ մենագրություն և բազմաթիվ հոդվածներ նվիրված ժամանակակից բուրժուական փիլիսոփայության և սոցիոլոգիայի քննադատությանը։

Իր երկարամյա աշխատանքի տարիներին Հայկազ Ասլանյանը նվաճել է մեր հանրապետության հասարակայնության հարգանքը և մեծ հեղինակություն էր վայելում։ Որպես գիտական ղեկավար, նա պատրաստել է փիլիսոփայության մի շարք որակյալ մասնագետներ, որոնք այժմ աշխատում են երկրի բարձրագույն ուսումնական հաստատություններում և գիտահետազոտական հիմնարկներում։

Գիտամանկավարժական գործունեության և կադրերի պատրաստման գործին մատուցած ծառայությունների համար Հայկազ Ասլանյանը երկու անգամ (1941 և 1945 թվականներին) պարգևատրվել է ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով և արժանացել հանրապետության գիտության վաստակավոր գործչի կոչման։

Հայկազ Ասլանյանը կենսուրախ, աշխույժ, լայն գիտելիքներով և նուրբ հումորով օժտված անձնավորություն էր, որի հետ հաճելի էր լինել թե՛ գիտական լսարանում և թե՛ ընկերական մթնոլորտում։

Հայկազ Ասլանյանի՝ ճանաչված գիտնականի, հասարակական գործչի և ազնիվ մարդու պայծառ հիշատակը միշտ վառ կմնա նրա ընկերների և նրան ճանաչողների սրտերում։

«ԼՐԱԲԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ԱՄՍԱԳՐԻ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ